ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

With funding from
Austrian Development Cooperation

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
THE MINISTRY OF ECONOMY OF THE RA
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РА

Austrian Development Agency

# ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում

## Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի

## Հայտամրցույթ



**ԿԳՆՀ ծրագիր. ENI/2019/408-058**

**ԱԶԳ հղում. 6546-00/2019**

SUSTAINABLE DEVELOPMENT GOALS

Մրցույթին մասնակցելու հայտադիմումի և օժանդակող փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է

# 31 հուլիսի, 2020թ.

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ԵՄ-ԿԳՆՀ ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները:

© 2020թ. Ավստրիական զարգացման գործակալություն: Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Լիցենզավորված է Եվրոպական միությանը՝ համաձայն պայմանների:

**ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության կողմից:** Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից, Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ համատեղ: Կառավարության կողմից գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային մարզերում՝ Շիրակում, Լոռիում և Տավուշում: Ծրագիրն իրականացվելու է առաջիկա երեք տարվա ընթացքում:

**Ի՞նչ եւ որտեղ**

Ծրագիրը հայտարարում է կանաչ և օրգանական ագրոբիզնեսի աջակցության բաց մրցույթ եւ հայտերի հավաքագրում՝ բաղկացած 2 լոտից.

- **ԼՈՏ 1՝ «Կանաչ» գյուղատնտեսական նախագծերի աջակցություն** միայն հետեւյալ մարզերի համար՝ Շիրակ, Լոռի և Տավուշ:

Այս բաղադրիչով ընտրված արժեշղթաներն են՝

- **Մրգերը, հատապտուղները, բանջարեղենը**՝ թե թարմ, թե վերամշակված

Աջակցության չափագումարը՝ **մինչեւ 10,000 եվրո**

- **ԼՈՏ 2՝ Օրգանական (սերտիֆիկացված կամ անցումային) ագրոբիզնեսի օժանդակություն** Հայաստանի բոլոր մարզերում եւ արժեշղթաներում:

Այնուամենայնիվ, նախապատվություն կտրվի հետևյալ արժեշղթաներին՝

- Թարմ և վերամշակված հատապտուղներ, մրգեր եւ խոտաբույսեր
- Փոքրարարական մշակաբույսեր
- Մեղր և մեղրաբուծական արտադրանք

Աջակցության չափագումարը՝ մինչեւ **15,000 եվրո**

***Հայտերի հավաքագրման վերջնաժամկետը՝ 2020թ.-ի հուլիսի 31-ը***

**Ի՞նչ է տրամադրում ծրագիրը**

Գյուղատնտեսական նշանակության մեքենաներ և սարքավորումներ, հետ բերքահավաքի և վերամշակման սարքավորումներ և ենթակառուցվածքային ներդրանքներ:

Կտրվեն միայն հիմնական, այլ ոչ թե դրամական միջոցներ:

**Ինչպե՞ս դիմել**

**Քայլ 1**

Ներբեռնի՛ր հայտադիմումը և հարակից փաստաթղթերն այստեղ՝

Հայտամրցույթ

Հայտադիմումի ձև

Բիզնեսի զարգացման պլան

Ֆերմայի կառավարման պլան

Համայնքի ղեկավարի հայտարարությունը

**Քայլ 2**

Ծանոթացի՛ր մրցույթի պայմաններին, լրացրու՛ հայտադիմումը և ԲՈԼՈՐ հարակից փաստաթղթերը ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՐՊՈՎ

**Քայլ 3**
Ուղարկի՛ր բոլոր լրացված փաստաթղթերը ՄԻԱՅՆ փոստով՝ պատվիրված, հետևյալ հասցեին՝
ՀՀ, ք. Երևան 0010, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, Վ. Սարգսյան 26/1 փողոց, 7-րդ հարկ, 712-716 սենյակներ

**Հարցերի դեպքում դիմել՝**
ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն ծրագիր (ԵՄ- ԿԳՆՀ)
Ավստրիայի Հանրապետության դեսպանոթթյան տեխնիկական համագործակցության գրասենյակ
***Երևանի գրասենյակ՝***
*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, Վ. Սարգսյան 26/1 փողոց, 7-րդ հարկ, 712-716 սենյակներ*
*Հեռ/բջջ: +374 60 655 955; +374 93 144 635*
*Էլ. փոստ՝ gaia@ada.gv.at*
*Facebook՝ GAIA Armenia*
***Վանաձորի գրասենյակ***
*Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, շենք 24 / 48*
*Հեռ/բջջ: ՝ +374 60 65 00 45*
*Էլ. փոստ՝ gaia@ada.gv.at*
*Facebook՝ GAIA Armenia*